Սոցիալական մեդիայում «Արտակարգ ալիք» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Տավուշ Մեդիա» նախագծի աշխատակիցների վարքագծի ուղեցույց

Սույն ուղեցույցը մշակվել է՝ ապահովելու «Արտակարգ ալիք» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Տավուշ Մեդիա» նախագծի (այսուհետ՝ Տավուշ Մեդիա) աշխատակիցների մասնագիտական էթիկան և սոցիալական մեդիայի ճիշտ օգտագործումը: Այն սահմանում է, թե ինչպես պետք է աշխատակիցները դրսևորեն իրենց սոցիալական հարթակներում՝ պահպանելով կազմակերպության վստահելիությունն ու չեզոքությունը:

Սոցիալական մեդիա ցանցերը հանդիսանում են հիմնական գործիքակազմ Տավուշ Մեդիայի աշխատակիցների համար՝ բովանդակություն տարածելու, լսարանի հետ հաղորդակցվելու և տեղեկատվություն փոխանակելու առումով: Այնուամենայնիվ, առցանց միջավայրում մասնավոր և մասնագիտական կյանքի սահմանները պահպանելը կարևոր է:

1. Հիմնական սկզբունքներ

1.1. Աշխատակիցները պարտավոր են սոցիալական մեդիայում իրենց ներկայությունը ապահովել կազմակերպության պրոֆեսիոնալ և էթիկական սկզբունքներին համապատասխան:

1.2. Պետք է խուսափել ցանկացած հրապարակումից, որը կարող է վնասել կազմակերպության հեղինակությանը:

1.3. Պարտադիր է պահպանել փաստերի ստուգման սկզբունքը՝ զերծ մնալով ապատեղեկատվության տարածումից:

1.4. Պետք է հարգել անձնական տվյալների գաղտնիությունը և խուսափել կազմակերպության ներքին տեղեկատվության բացահայտումից:

2. Չեզոքություն և անաչառություն

2.1. Կազմակերպությունում աշխատող անձինք պարտավոր են չեզոքություն պահպանել սոցիալական մեդիայի հարթակներում՝ խուսափելով որևէ քաղաքական, կրոնական կամ գաղափարական կողմնակալությունից:

2.2. Սոցիալական մեդիա հարթակներում պետք է խուսափել քաղաքական գործիչների, կուսակցությունների կամ այլ շահագրգիռ կողմերի աջակցող

կամ քննադատող հրապարակումներից:

2.3. Կազմակերպության հետ ասոցացվող աշխատակիցների սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակված անձնական կարծիքները չպետք է հակասեն կազմակերպության պաշտոնական դիրքորոշմանը:

3. Լրատվական արժեքների պահպանում

3.1. Սոցիալական մեդիայում տեղադրված բոլոր հրապարակումներն ու մեկնաբանությունները պետք է լինեն ճշգրիտ, հիմնավորված:

3.2. Պետք է խուսափել անձնական վիրավորանքներից, ատելության խոսքից և զրպարտությունից:

3.3. Եթե հրապարակումը կարող է սխալ մեկնաբանվել, ցանկալի է հստակեցնել դրա համատեքստը:

4. Վեճեր և կոնֆլիկտներ

4.1. Եթե աշխատակիցը սոցիալական մեդիայում ներգրավված է հակասական քննարկումներում, պետք է պահպանի անձնական և մասնագիտական պրոֆեսիոնալիզմ ու էթիկա:

4.2. Խորհուրդ է տրվում չպատասխանել սադրիչ մեկնաբանություններին, այլ դիմել կազմակերպության ղեկավարությանը՝ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

4.3. Աշխատակիցները չպետք է հրապարակայնորեն վիճեն կազմակերպության քաղաքականության կամ գործունեության վերաբերյալ:

5. Անձնական և մասնագիտական հաշիվների տարանջատում

5.1. Խորհուրդ է տրվում առանձին պահել անձնական և մասնագիտական հաշիվները՝ աշխատելով սահմանափակել լրատվական կազմակերպության հետ կապվող անձնական հրապարակումները:

5.2. Եթե աշխատակիցը հանդես է գալիս որպես լրատվական կազմակերպության ներկայացուցիչ, նա պետք է դա հստակ նշի և խուսափի սխալ ընկալումներից:

6. Ընդհանուր սկզբունքներ

Պետք է հիշել, որ առցանց հրապարակված ցանկացած բան կարող է հանրային դառնալ, ինչպես նաև ասոցացվել կազմակերպության և կազմակերպության դիրքորոշման հետ:

6.1. Տավուշ Մեդիան խրախուսում է սոցիալական ցանցերում լրագրողների ակտիվ մասնակցությունը՝ պահպանելով մասնագիտական էթիկայի բարձր չափանիշներ: Մեր ամենակարևոր արժեքն ազնվությունն է: Պետք է խուսափել ցանկացած բովանդակությունից, որը կարող է վնասել Տավուշ

Մեդիայի համբավին կամ վստահելիությանը:

6.2. Առցանց տիրույթում մշտապես պետք է հիմք ընդունել այն ենթադրությունը, որ ցանկացած բովանդակություն կարող է դառնալ հրապարակային, նույնիսկ եթե օգտագործվում են տեղեկատվության հասանելիությունը սահմանափակող միջոցներ (օրինակ՝ ձևակերպում եք սահմանափակ լսարան, կամ հրապարակում եք անում սոցցանցային գաղտնի խմբում):

6.3. Անհրաժեշտ է օգտագործել սոցիալական ցանցերը ընթերցողների հետ շփվելու և հետադարձ կապ ապահովելու համար:

6.4. Պետք է պատասխանատու լինել սեփական հրապարակումների համար:

6.5. Պետք է խրախուսել կառուցողական երկխոսություն և բացառել կոնֆլիկտները:

6.6. Անհրաժեշտ է հղում կատարել հուսալի աղբյուրներին:

6.7. Անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական ցանցերի ծառայության պայմանները:

6.8. Անհրաժեշտ է հարգել խմբագրության ներքին քննարկումների գաղտնիությունը:

7. Պատասխանատվություն և հետևանքներ

7.1. Սոցիալական մեդիայում կազմակերպության կանոնները խախտելու դեպքում կարող են կիրառվել կարգապահական միջոցներ, ներառյալ նախազգուշացումներ կամ կարգապահական պատասխանատվություն:

7.2. Ցանկացած վիճահարույց իրավիճակում խորհուրդ է տրվում դիմել կազմակերպության հաղորդակցության բաժնին կամ ղեկավարությանը:

8. Ուղեցույցի կիրառման վերահսկում

8.1. Կազմակերպությունը իրավունք ունի ստուգելու և վերլուծելու աշխատակիցների հրապարակումները, որոնք առնչվում են լրատվական գործունեությանը:

8.2. Պարբերաբար կանցկացվեն վերապատրաստումներ՝ ապահովելու աշխատակիցների իրազեկվածությունն ու մեդիագրագիտությունը: